ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ
1831 K Street
Sacramento, CA 95811
Հեռ.՝ (916) 504-5800
Հեռատիպ՝ (800) 719-5798
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746
Ֆաքս՝ (916) 504-5802
www.disabilityrightsca.org

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ - ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԲՈՂՈՔ

Դուք կարող եք բողոք ներկայացնել, եթե.

- Օգնություն եք խնդրել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունից, սակայն Ձեզ պատասխանել են, որ չեք կարող օգնություն ստանալ,
- Ներկայումս օգնություն եք ստանում Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունից, սակայն դժգոհ եք այդ օգնությունից, կամ
- Ձեզ տրամադրվող օգնությունն ավարտվել է, և Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունը մերժել է հետագայում օգնության տրամադրումը:

Բողոք ներկայացնելու համար կարող եք անել հետևյալը.

Քայլ 1- **(ոչ պարտադիր) Անհամաձայնության խնդիրը քննարկեք Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության աշխատակցի հետ:**

Հնարավոր է, որ խնդրի վերաբերյալ ցանկանաք խոսել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության աշխատակազմից որևէ մեկի հետ: Դուք պարտավոր չեք այդ անել:

Քայլ 2- Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության գործադիր տնօրեն

Կարող եք բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության գործադիր տնօրենին՝ Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության կողմից Ձեզ դուր չեկած որոշումը կայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

Բողոքը կարող եք ներկայացնել՝ օգտագործելով կցված ձևը, Ձեր բողոքը ձևակերելով այլ թղթի վրա կամ զանգահարելով Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպություն: Ձեր բողոքն ուղարկեք հետևյալ հասցեով.

Executive Director
Disability Rights California
1831 K Street
Sacramento, CA 95811-4114

Հեռախոս՝ 916-504-5800 (վճարված զանգերի ընդունում) կամ (800) 776-5746
Ֆաքս՝ 916-504-5802
Հեռատիպ՝ (800) 719-5798
Էլ.փոստ՝ grievance@disabilityrightsca.org

Գործադիր տնօրենը կուսումնասիրի Ձեր բողոքը և 30 օրվա ընթացքում կկայացնի գրավոր որոշում, եթե տնօրենը Ձեզ չի տեղեկացնում, որ իրեն ավելի շատ ժամանակ է հարկավոր:

Քայլ 3- Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության Տնօրենների խորհուրդ

Գործադիր տնօրենի կայացրած որոշման հետ համաձայն չլինելու դեպքում գործադիր տնօրենի կողմից որոշումը կայացնելուց հետո 30 օրվա ընթացքում կարող եք պահանջել վերանայում Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության Տնօրենների խորհրդի գործադիր հանձնաժողովի կողմից:

Վերանայումը կարող եք պահանջել՝ օգտագործելով կցված ձևաթուղթը, Ձեր պահանջը ձևակերպելով մեկ այլ թղթի վրա կամ զանգահարելով Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպություն: Ձեր պահանջն ուղարկեք հետևյալ հասցեով.

President, Board of Directors
Disability Rights California
1831 K Street
Sacramento, CA 95811-4114

Հեռախոս՝ 916-504-5800 (վճարված զանգերի ընդունում) կամ (800) 776-5746
Ֆաքս՝ 916-504-5802
Հեռատիպ՝ (800) 719-5798
Էլ.փոստ՝ board@disabilityrightsca.org

Խորհրդի գործադիր հանձնաժողովը կվերանայի Ձեր պահանջը և գրավոր որոշում կկայացնի 30 օրվա ընթացքում, եթե Խորհրդի նախագահը Ձեզ չտեղեկացնի, որ իրեն ավելի շատ ժամանակ է հարկավոր: Գործադիր հանձնաժողովի որոշումը Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության վերջնական որոշումն է:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՁԵԱԹՈՒՂԹ

Բողոք ներկայացնելու համար կարող եք օգտագործել այս ձևաթուղթը՝ Ձեր բողոքը ձևակերպելով այլ թղթի վրա, կամ զանգահարելով (916) 504-5800 (վճարված հեռախոսազանգերի ընդունում) կամ (800) 776-5746 կամ օգտագործելով (800) 719-5798 համարի հեռատիպը և խնդրելով Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության աշխատակազմի անդամին օգնել Ձեզ բողոքը գրելու հարցում: Դուք կարող եք Ձեր բողոքն ուղարկել նաև ֆաքսով՝ (916) 504-5809 համարին, կամ ուղարկել այն էլ.փոստի grievance@disabilityrightsca.org հասցեին:

Ձեր անունը՝

Ձեր հասցեն՝

Ձեր ցերեկային հեռախոսահամարը՝

Ձեր էլ.փոստի հասցեն՝

Եթե որևէ մեկին օգնում եք կազմել այս բողոքը, նրանց անունները՝

Խնդրում ենք բացատրել, ինչու եք բողոք ներկայացնում.

Ի՞նչն եք ցանկանում, որ Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունն անի այլ կերպ: